



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության
առաջին աստիճանի դատարանի վճիռ
Վարչական գործ N 0245/05/10թ.
Նախագահող դատավոր՝ Ա.Աբրահամյան

Վարչական գործ N 0245/05/10թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք.Ստեփանակերտ

2011թ. դեկտեմբերի 15-ին

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

Նախագահությամբ՝ դատավոր Զ. Օհանյանի
Դատավորներ՝ Ի. Կարապետյանի
 Գ. Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի «Վարանդա» ՓԲԸ ընդդեմ ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայության՝ թիվ 006001 ստուգման ակտը մասնակիորեն վիճարկելու և անվավեր ճանաչելու պահանջի մասին վարչական գործով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2011թ. հոկտեմբերի 7-ի վճռի դեմ ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի պաշտոնակատար Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

«Վարանդա» փակ բաժնետիրական ընկերությունը /այսուհետ՝ Ընկերություն/, դիմելով դատարան, խնդրել է ԼՂՀ ԿԱ ՀՊԾ-ի 12.05.2010թ. թիվ 006001 ստուգման ակտով առաջադրված 7մլն.150 հազար 400 դրամ պարտավորությունից մասնակի անվավեր ճանաչել /նվազեցնել/ 7 մլն.067 հազար 700 դրամը, 16 մլն.90 հազար դրամի շահութահարկի գծով վնասի պակասեցումը, ինչպես նաև ճիշտ արտացոլել հետաձգված ԱԱՀ-ի դեբետային մնացորդը՝ 848 հազար 500դրամի չափով, հիմնավորելով հայցը նրանով, որ ակտը կազմվել է օրենքի խախտումներով. ստուգման ակտում լրիվությամբ չեն նկարագրված արձանագրված խախտումները, այդ իսկ պատճառով առաջադրված խախտումներն անհասկանալի են: Ճիշտ չեն հաշվարկվել 3218,0 հազար դրամ տուգանքը՝ շահութահարկի, 516,3 հազար դրամի

չափով պարտավորություններն եկամտահարկի, 641,4 հազար դրամ պարտադիր սոցիալական ապահովության վճարների և բնապահպանական վճարների գծերով:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի /այսուհետ՝ Վարչական դատարան/ դատարանի 2011թ. հոկտեմբերի 7-ի վճռով հայցը բավարարվել է մասնակի: Վճռվել է ԼՂՀ ԿԱ ՀՊԾ-ի թիվ 006001 առ 12.05.10թ. ակտը մասնակիորեն՝ ստուգմամբ առաջադրված շահութահարկի գծով 3 մլն 218 հազար դրամ գումարի /տուգանքի/ չափով պարտավորության, եկամտահարկի գծով՝ 516 հազար 300 դրամ գումարի չափով պարտավորության, բնապահպանական վճարի՝ 723 հազար 400 դրամ գումարի չափով պարտավորության, 2007թ. պարտադիր սոցապահովության վճարի գծով՝ 724 հազար դրամ գումարի չափով պարտավորության մասերով և 16 մլն 90 հազար դրամ գումարի չափով շահութահարկի գծով վնասի պակասեցման մասով ճանաչել անվավեր, իսկ 2007-2009թթ. համար պարտադիր սոցվճարների գծով 1 մլն 968 հազար 600 դրամ գումարի չափով պարտավորության նվազեցման և 848 հազար 500 դրամ գումարի՝ որպես ԱԱՀ-ի հետաձգված գումարի ստուգման ակտում արտացոլելու հայցապահանջներով գործի վարույթը կարճել՝ հայցվորի այդ մասով հայցից հրաժարվելու հիմքով:

Վճռի դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել պատասխանող ԼՂՀ ԿԱ ՀՊԾ-ն:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Ընկերությունը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է ներքոհիշյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Դատարանի կողմից կայացված վճիռը՝ հայցապահանջի բավարարման մասով անհիմն է, քանի որ այն կայացվել է միայն դատատնտեսագիտական փորձաքննությունների եզրակացությունների հիման վրա, ինչը չի ենթադրվում որպես վարչական գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտում ու արդյունքում վճռի՝ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածով ղեկավարվելով կայացում:

Նշված պնդումը բողոք բերած անձը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Դատատնտեսագիտական փորձաքննությունների արդյունքում կազմված եզրակացություններում առկա՝ ստուգման ակտի հետ հակասական բնույթ կրող առանձին եզրահանգումները հերքող հիմնավորումները բխում են ԼՂՀ-ում գործող իրավական ակտերից և սահմանադրորեն օժտված են համապարտադիր բնույթով:

Այսպես՝ փորձագետի 22.08.2011թ. եզրակացության «Հետևություններ» պարբերության 4-րդ կետով Ընկերությանը շահութահարկի գծով 3218000 դրամ գումարի չափով տուգանքի առաջադրումը չի դիտվել որպես հիմնավոր, այն դեպքում, երբ համաձայն «ԼՂՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ԼՂՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի՝ ստուգումն օրենքի հիման վրա իրականացվող ընթացակարգ է, որով պարզվում է տնտեսավարող սուբյեկտի ներկայացրած հաշվետվությունների, ԼՂՀ օրենսդրությամբ նախատեսված հայտարարագրերի, հարկերի և պարտադիր այլ վճարների գծով նախատեսված հաշվարկների, ելակետային տվյալների, այլ փաստաթղթերի արժանահավատությունը և վերջինիս ծավալած փաստացի գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին, իսկ «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ ապրանքանյութական պաշարների, աշխատանքների, ծառայությունների, հիմնական միջոցների և այլ ակտիվների ձեռք բերման փաստաթղթերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանվում են ԼՂՀ Կառավարության 2000թ. դեկտեմբերի 26-ի թիվ 254 որոշմամբ, ինչը պահպանված չէր Ընկերության կողմից և որի մասով, սակայն, Ընկերությունը կատարել է ամորտիզացիոն մասնահանում /չհիմնավորված ծախս/:

Եկամտահարկի գծով 516300 դրամ գումարի ճիշտ հաշվարկման հարցի վերաբերյալ փորձագետը նշել է, որ ԿԱՎԶ մակնիշի ավտոբուսի շահագործման ծախսերը չեն տարանջատվել, որպես արտադրական նշանակության և աշխատողների անձնական նպատակներով, այն «Եկամտահարկի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի «ը» կետի պահանջներին չի համապատասխանում, այսինքն՝ չի դիտվում որպես եկամուտ: Մինչդեռ, ԼՂՀ Կառավարության 2001թ. օգոստոսի 22-ի թիվ 229 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձանց բնամթերային ձևով վճարված եկամուտները կարող են լինել գույքի /բայց ոչ դրամական միջոցներով/, աշխատանքի, ծառայության և այլ ձևով: Տվյալ պարագայում Ընկերությունը ֆիզիկական անձանց եկամուտ է վճարել ծառայության ձևով, ինչը հիմք ընդունելով հաշվարկվել է եկամտահարկ:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով գնահատականը փորձագետը տվել է օրենքի մեկնաբանմամբ, որը դուրս է փորձագետ-տնտեսագետի իրավասությունների շրջանակից: Այն է՝ ստուգմամբ առաջադրված պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 641400 դրամ տուգանքի գումարը փորձագետը դիտել է չհիմնավորված՝ եռամսյակային հաշվետվության մեջ Ընկերության կողմից ներառելու հիմքով: Այդ այն դեպքում, երբ «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ գործատուները յուրաքանչյուր ամիս հաշվարկում են սոցիալական վճարներ, դրանց հաշվին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով վարձու աշխատողներին հաշվարկում ու վճարում են նպաստներ, որից հետո դրանց տարբերությունը փոխանցում են պետական բյուջե մինչև հաջորդ ամսվա 20-ը /ներառյալ/՝ յուրաքանչյուր ամսում փաստացի վճարված ապահովագրական նպաստների գումարների չափով /բայց ոչ ավելի, քան տվյալ ամսվա համար հաշվարկված սոցիալական վճարների գումարը/՝ պակասեցումը կատարելով հաջորդ ամսվա 20-ին:

Բնապահպանական վճարի գծով առաջադրված 723400 դրամ պարտավորությունը գտնելով ճիշտ հաշվարկված՝ տեսակարար ցուցանիշները հիմք ընդունելու պայմանով, փորձագետը միաժամանակ գտել է, որ ըստ ձևի այն հաշվարկվել է ԼՂՀ հարկային օրենսդրության պահանջների խախտմամբ: Փաստորեն եկամտահարկի գծով հաշվարկված պարտավորությունների ճշտման անհրաժեշտությունից ելնելով առաջադրված ԿԱՎԶ մակնիշի ավտոբուսի շահագործման ծախսերով հարկման օբյեկտը պարզելու նպատակով փորձագետը, դիտելով կիրառված հիմքը չտարանջատված արտադրական նշանակության ծախսերից, միևնույն ժամանակ՝ որպես ոչ օրինական, չի կատարել հաշվարկներ, ինչը, սակայն, պարտավոր էր կատարել համաձայն դատարանի որոշման՝ դրանով իսկ դուրս գալով իրավասության շրջանակներից, իսկ մեկ այլ պարագայում կատարել է բնապահպանական վճարների հաշվարկների ուսումնասիրություն ու հաշվարկման ճշտության գնահատում:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վարչական դատարանի 07.10.2011թ. վճիռը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության:

2.1.Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները.

Վճռաբեկ բողոքի պատասխանում հայցվորը պատճառաբանում է, որ Վարչական դատարանը, լսելով կողմերի բացատրությունները, վկաների և փորձագետի ցուցմունքները, ուսումնասիրելով դատատնտեսագիտական ու կրկնակի դատատնտեսագիտական փորձաքննությունների եզրակացությունները, գործում առկա գրավոր ապացույցները, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, այլ ոչ թե միայն դատատնտեսագիտական փորձաքննությունների եզրակացությունները, հիմնավոր է գտել,

որ հայցը ենթակա է մասնակի բավարարման: Ընկերությունը 2010թ. օգոստոսի 10-ին վիճարկվող 7067.7 հազար դրամից վճարել է (հաշվանցման եղանակով) 5108.3 հազար դրամ՝ համաձայն ԼՂՀ ԿԱ ՀՊԾ-ի 2010թ. օգոստոսի 10-ի ուսումնասիրության արձանագրության:

Պատասխան բերողը խնդրել է Վարչական դատարանի վճիռը թողնել օրինական ուժի մեջ:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) ԼՂՀ ԿԱ ՀՊԾ-ի պետի թիվ 007515110 առ 05.04.2010թ. հանձնարարագրի համաձայն՝ ԼՂՀ ԿԱ ՀՊԾ ԽՀՎՎ ՎԳԲ գլխավոր հարկային տեսուչներ Ա.Ժամհարյանին և Է.Գրիգորյանին հանձնարարվել է կատարել «Վարանդա» ՓԲԸ-ի բյուջեների հանդեպ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների ու պարտավորությունների հաշվարկման և վճարման ճշտության ստուգում (հատոր 1-ին, գ.թ. 12):

2) Ստուգման արդյունքներով կազմվել է թիվ 006001 առ 12.05.10թ. ակտը, որով «Վարանդա» ՓԲԸ-ին առաջադրվել է 7 մլն 150 հազար 400 դրամի պարտավորություն (հատոր 1-ին, գ.թ. 13-16):

3) ԼՂՀ ԿԱ ՀՊԾ գանգատարկման հանձնաժողովի 05/10 առ 14.07.2010թ. որոշմամբ «Վարանդա» ՓԲԸ-ի դիմում-գանգատը մասնակի բավարարվել է և թիվ 006001 ստուգման ակտը նվազեցվել է 1 մլն 968 հազար 600 դրամ գումարի չափով, որից սոցիալական վճար՝ 931 հազար 100 դրամ, տուգանք՝ 558 հազար 700 դրամ և տույժ՝ 478 հազար 800 դրամ, իսկ ստուգման ակտի «Ավելացված արժեքի հարկի մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի համաձայն «ստուգվող ժամանակաշրջանում տնտեսավարող սուբյեկտի կողմից ստացված և դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկություններ» պարբերության 3-րդ աղյուսակի «ԱԱՀ-ի գումարը» սյունակում նշված 625.9 հազար դրամ գումարի փոխարեն արտացոլվել է 848.5 հազար դրամ գումարը՝ որպես ԱԱՀ-ի հետաձգված գումար (հատոր 1-ին, գ.թ. 21-23):

4) Դատահաշվապահական փորձաքննության 21.03.2011թ. ՀՄ՝ 26815-10 եզրակացության համաձայն՝ թիվ 006001 ստուգման ակտը կազմված է ԼՂՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ստուգման ակտում հաշվարկված պարտավորությունները գումարային առումով հաշվարկված են ճիշտ: Շահութահարկի, եկամտահարկի, սոցիալական վճարի գծով Ընկերությունը հարկային պարտավորություններ չունի: Եթե «Միջավայր» ՍՊԸ կողմից հաշվարկված ջերմային գործընթացների արդյունքում առաջացող վնասակար նյութերի արտանետումների տեսակարար ցուցանիշների և բնապահպանական վճարների հաշվարկը ընդունենք ճիշտ, որը ենթակա է իրավական գնահատման, ապա Ընկերության բնապահպանական վճարի գծով հարկային պարտավորությունը կկազմի 723.4 հազար դրամ (հատոր 2-րդ, գ.թ. 6-26):

5) Կրկնակի դատատնտեսագիտական փորձաքննության 22.08.2011թ. ՀՄ՝ 11-1386 եզրակացության համաձայն՝ թիվ 006001 ստուգման ակտը ըստ ձևի կազմվել է ԼՂՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, իսկ բովանդակային առումով մասնակիորեն է կազմվել ԼՂՀ օրենսդրության համապատասխան: Շահութահարկի, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով «Վարանդա» ՓԲ ընկերությանը լրացուցիչ առաջադրված պարտավորությունների հաշվարկումը կատարվել է ուղղակի եղանակով: Նշված եղանակով հաշվարկները կատարվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության, ՀՀՀՀ Ս16 (հիմնական միջոցներ) ստանդարտի պահանջների խախտմամբ: Բնապահպանական և բնօգտագործման վճարների

մասով «Վարանդա» ՓԲ ընկերությանը լրացուցիչ առաջադրված պարտավորությունների հաշվարկումը կատարվել է անուղղակի եղանակով: Նշված եղանակով հաշվարկները կատարվել են «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ պարբերության և ԼՂՀ Կառավարության կողմից 1999թ. սեպտեմբերի 14-ի թիվ 75 որոշմամբ հաստատված ««Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված դեպքերում ԼՂՀ ԿԱ հարկային պետական ծառայության կողմից հարկվող օբյեկտների և հարկային պարտավորությունների հաշվարկման (գնահատման)» կարգի պահանջների խախտմամբ (հատոր 2-րդ, գ.թ. 81-121):

6) Փորձագետի եզրակացությունը ստանալուց հետո Վարչական դատարանը 20.09.2011թ., բավարարելով պատասխանողի ներկայացուցչի միջնորդությունը՝ գործի քննությունը հետաձգելու և եզրակացությունը ուսումնասիրելու մասին, գործի քննությունը հետաձգել է և նշանակել 24.09.2011թ.: 24.09.2011թ. Վարչական դատարանը մերժել է պատասխանողի ներկայացուցչի դատական նիստում ներկայացրած գրավոր միջնորդությունը գործի քննությունը կրկին հետաձգելու մասին (միջնորդությունում պատճառաբանվել է, որ փորձագետի եզրակացությանը պատասխանող հարկային պետական ծառայությունը կարողացել է ծանոթանալ միայն 21.09.2011թ.՝ դատական նիստում հրապարակելու ժամանակ, ինչի արդյունքում պարզվել է, որ կարևոր նշանակություն ունեցող փաստաթղթերը փորձագետների կողմից չեն պահանջվել և արդյունքում դրանք հաշվի չեն առնվել) (հատոր 2-րդ, գ.թ. 131-144): Գործի քննությունը համարվել է ավարտված և դատարանը անցել է վճիռ կայացնելու, որը պետք է հրապարակվեր 7.10.2011թ.:

7) 4.10.2011թ. պատասխանող ԼՂՀ ԿԱ ՀՊԾ ներկայացրել է միջնորդություն՝ փորձագետների եզրակացությունների մեջ առկա հակասությունների վերացման նպատակով կրկնակի փորձաքննություն նշանակելու մասին (հատոր 2-րդ, գ.թ. 141-142), ի պատասխան որի՝ նախագահող դատավորի 5.10.2011թ. գրությամբ հայտնվել է, որ միջնորդությունը թողնվում է առանց քննարկման, քանի որ դատաքննությունը ավարտվել է 24.09.2011թ., ու դատարանը հեռացել է վճիռ կայացնելու (հատոր 2-րդ, գ.թ. 143):

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գերագույն դատարանը, վերանայելով Վարչական դատարանի վճիռը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, վերլուծելով գործի հանգամանքները և բողոքի փաստարկները, գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 56-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված դեպքերում, կարգով և չափով մուծել հարկեր, տուրքեր, կատարել պարտադիր այլ վճարումներ:

Հարկային պարտավորությունը ներառում է հարկերի (այդ թվում՝ թաքցված (պակաս ցույց տված) հարկվող օբյեկտի համար նախատեսված), ինչպես նաև հարկային օրենսդրությունը և ԼՂՀ-ում հարկային հարաբերությունները կարգավորող մյուս իրավական ակտերը խախտելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարների վճարումը:

Համաձայն «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ հարկերը ճիշտ հաշվարկելու, ժամանակին վճարելու և հարկային օրենսդրության մյուս պահանջները պահպանելու պատասխանատվությունը, հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չլինելու դեպքում, կրում են հարկ վճարողները և դրանց (ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների)՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պաշտոնատար անձինք:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստերը վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե: Դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցները: Դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստի:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի համաձայն՝ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս՝ գնահատում է ապացույցները, որոշում է, թե գործի համար նշանակություն ունեցող որ հանգամանքներն են պարզվել և որոնք չեն պարզվել, որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը: Վարչական դատարանը, անհրաժեշտ համարելով լրացուցիչ հետազոտել ապացույցները կամ շարունակել գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզումը, վերսկսում է գործի քննությունը:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ դատավարության մրցակցության ձևը չի զրկում դատարանին, պահպանելով անկախությունը, օբյեկտիվությունը և անաչառությունը, ապացուցման բազայի ձևավորմանը ակտիվ մասնակցելու հնարավորությունից:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտմամ և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է ապացույցների տեսակները՝ վկայի ցուցմունքը, փորձագետի ցուցմունքը, գրավոր ապացույցները և իրեղեն ապացույցները: Իսկ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե փորձագետը չի կանչվում դատական նիստին, ապա դատարանը փորձագետի գրավոր եզրակացությունը դիտում է որպես փորձագետի ցուցմունք: Նույն օրենսգրքի 40-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փորձագետի եզրակացությունը դատարանը տրամադրում է գործին մասնակցող անձանց և հետազոտում է գործում եղած այլ ապացույցների հետ: Մեկնաբանելով նշված նորմերը, Գերագույն դատարանը հարկ է համարում արձանագրել, որ օրենսդիրը փորձագետի եզրակացության /որպես ապացույցի/ համար որևէ առավելություն չի սահմանել, այն գնահատվում է այլ ապացույցների հետ՝ համակցությամբ, ինչը բխում է նաև ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որոնց՝ դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի վճռի մեջ պետք է պատճառաբանվի նման համոզմունքի ձևավորումը:

Մինչդեռ, Վարչական դատարանը, ի խախտումն վերը նշված հոդվածների պահանջների, սույն գործով բազմակողմանի քննություն չի կատարել, հայցի բավարարման հիմքում դնելով միայն դատատնտեսագիտական /իրականում՝ դատահաշվապահական/ և կրկնակի դատատնտեսագիտական փորձաքննությունների եզրակացությունները՝ իրավական գնահատական չտալով դրանց և քննարկման առարկա չդարձնելով պատասխանողի առարկությունները, ինչը հանգեցրել է չհիմնավորված վճռի կայացմանը,

իսկ համաձայն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ հոդվածների՝ դատարանի վճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված: Վերոգրյալից ելնելով՝ Գերագույն դատարանը արձանագրում է, որ դատարանը պարտավոր է տալ վճռի իրավական և փաստական հիմնավորումները:

Գերագույն դատարանը նախկինում կայացրած իր որոշումներում անդրադարձել է դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին:

Մասնավորապես, Գերագույն դատարանը նշել է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ վճռի իրավական հիմնավորումը:

Այսպիսով, եթե դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չի հետազոտել գործի փաստական հանգամանքները, չի պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող հանգամանքները, իրավական գնահատական չի տվել գործում առկա ապացույցներին, ապա դատարանի կայացրած վճիռը պետք է բեկանել և գործն ուղարկել նոր քննության:

Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի պահանջների խախտման և փորձագիտական եզրակացությունների ոչ ճիշտ գնահատման մասին սույն վճռաբեկ բողոքի հիմքերը բավարար են՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-241-րդ հոդվածների ուժով դատարանի վճիռը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու համար, չանդրադառնալով բողոքի մյուս հիմքերին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Վարչական դատարանը նոր քննության ընթացքում պետք է պատշաճ գնահատման առարկա դարձնի վիճարկվող ստուգման ակտը, այն համադրելով փորձագետների եզրակացությունների, այլ ապացույցների և գործող հարկային օրենսդրության պահանջների հետ, ու կայացնի օրինական և հիմնավորված վճիռ:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածով, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ ԿԱ ՀՊԾ պետի պաշտոնակատար Ա.Հարությունյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի (Վարչական դատարանի) 2011թ. հոկտեմբերի 7-ի վճիռը բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության:

Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության ընթացքում:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝

Ձ. ՕՀԱՆՅԱՆ

Դատավորներ՝

Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ